ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 023734855 metsamormeria@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1747

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 10:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-21/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

2. 2022 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 11:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-29/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

3.2022 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետը /ծածկագիր 3.1-33/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

4.2022 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 15:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի 1-ին կարգի մասնագետը /ծածկագիր 3.2-24/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

5.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

6.Աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

7.Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման տեղեկատվական տեխնելոգիաների բաժնի պետ՝ Նինա Թադևոսյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 29
ք.Մեծամոր

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

3.2-24

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1152124**:
Տպեք կամ պահպանեք այն:

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

3.1-33

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1152074**:
Տպեք կամ պահպանեք այն:

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

3.1-29

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1152020**:
Տպեք կամ պահպանեք այն:

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

3.1-21

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման նույնականացման համարն է **1152011**:
Տպեք կամ պահպանեք այն: